

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Փայռք քեզ, Արցախ, սեր և օրհնանք, որ ցավից էլ ուժ ես առնում և տեր կանգնում հայոց արժանապատվությանը

ԵՐԻՇՇԵ ՉԱՐԵՆՑ

Սյունիքի փրկարար ծառայությունը՝ «Լավագույն տարածքային ստորաբաժանում»

Ա ին փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի պաշտոնակատար Ռոմա Սահակյանի աշխատանքային մտնելիս առաջին աչքի է զարնում «Լավագույն տարածքային ստորաբաժանում» գրության փոխանցիկ դորձը, որին վարչությունն արժանացել է 2022 թվականի արդյունքներով: Պարզվում է՝ սա միակ խրախուսանքը չէ: ԱԻՆ փրկարար ծառայության լավագույն վարորդ է ճանաչվել թիվ 54 (Կապանի) հրշեջ-փրկարարական ջոկատի վարորդ Մարատ Յակոբյանը, ծառայության տարվա լավագույն հերթափոխ է ճանաչվել Սիսիանի հրշեջ-փրկարարական ջոկատի երրորդ հերթափոխը: Այդ ամենը հանդիսավոր պայմաններում մայրաքաղաքում փետրվարի 4-ին ստացել են փրկարարական ծառայության տնօրեն, գեղապետ Կամո Ցուցույանի ձեռամբ: Ինչ խոսք, տարին բարեբեր էր մարզային ծառայության համար, և այս հրապարակումով պատեհ են համարել նախևառաջ ծառայության ղեկավարին ներկայացնել:

Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը 2022 թ. մայիսից ղեկավարում է փրկարար ծառայության փոխգնդապետ Ռոմա Սահակյանը՝ պետի պաշտոնակատարի կարգավիճակով: Սովորել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, 1990-1995 թվականներին ընդունվել և ավարտել է Երևանի պետական մանկապարտեզի պատմության ֆակուլտետը: 1995-1997 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2022 թվականից ծառայության է անցել փրկարար ծառայությունում՝ ավագ սպա, այնուհետև՝ հերթափոխի պետ, օպերատիվ բաժնի պետ, Կապանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, ճշմարտության կառավարման կենտրոնի պետ: Միով բանիվ, անցել է ծառայողական բոլոր աստիճաններով:

Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը սպասարկում է աշխարհագրական ռեյիթեթով բարդ մի տարածաշրջան՝ Ագարակի մաքսակետից մինչև Սիսիանի գանգեր, ունի հինգ ստորաբաժանում՝ Կապանի թիվ 54, Գորիսի թիվ 55, Սիսիանի թիվ 57, Քաջարանի թիվ 58 և Մեղրու թիվ 56 հրշեջ փրկարարական ջոկատները, ընդ որում՝ վերջինիս կազմի մեջ է մտնում Ագարակի հենակետը: Վարչությունն ունի 35 միավոր տեխնիկա՝ ծառայողական, օպերատիվ, փրկարարական, հրշեջ ավտոբուս և այլն:

Փրկարար ծառայությունը միշտ արտակարգ իրավիճակների պայմաններում է գործում: Բայց հատկապես վերջին չորս տարում լարվածությունը հասել էր առավելագույնի՝ նախ կորուսվողիսի համավարակ էր, այնուհետև՝ 44-օրյա պատերազմ:

Բոլորիս ինչո՞ղության մեջ թարմ է, թե ինչպես էր ծառայության մեքենան շրջում քաղաքում և մարդկանց ինչեղանակ սանիտարահիգիենիկ այն պայմանները, որոնք անհրաժեշտ էր պահպանել կորուսվողիսում չվարակվելու համար: Նաև ախտահանումներ էին կատարում մարզի հանրային այն վայրերում, որտեղ բնակչության կուտակումներ էին լինում:

Ռոմա Սահակյանը պատմում է, որ ամենալարված ծառայությունը 44-օրյա պատերազմի ժամանակ էր. ծառայության փրկարարները մասնակցել են դիերի որոնմանը և աճյունների տեղափոխմանը Գորիսի ու Կապանի բժշկա-

Չանգեզուրի միջանցք կոչվածը, իրականանալու դեպքում, կլինի ակտիվ ռումբ, որ ամեն պահի կարող է պայթեցնել մեր պետականությունը

Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական կացությունը, ընթացող զարգացումները, Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները շարունակում են մտահոգել սյունեցիներին: Իրավիճակը բնարկելու և մի շարք հարցեր պարզաբանելու համար գրույցի հրավիրեցինք Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ղեկան, թյուրքագիտության ճանաչված մասնագետ, պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանին:

Պարոն Մելքոնյան, նախ՝ շնորհակալություն՝ հարցազրույցի մեր առաջարկին դրականորեն արձագանքելու համար:
– Ձեզ եմ շնորհակալ:
– **Չրույցը սկսե՞ք Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի հանդեպ մեր իշխանությունների արձագանքը գնահատելով:**



բաղաբանություն, չեն կարող նույն վերաբերմունքին արժանանալ: Այնպես որ՝ Հայաստանի իշխանությունների արձագանքը Թուրքիայում տեղի ունեցած ողբերգությանը... Իրենք կարող են դա գնահատել որպես դիվանագիտական արարողակարգով սահմանված քայլ, բայց և՛ նախագահի, և՛ վարչապետի, և՛ Ազգային ժողովի նախագահի արձագանքները, կարծում եմ, կարող էին լինել շատ ավելի զուսպ: Չմոռանա՞ք՝ Թուրքիան այն երկիրն է, որը 44-օրյա պատերազմում Ադրբեջանի հետ

հավասար մասնակցել է մարտական գործողությունների, թուրք զեներայներն են ղեկավարել այդ պատերազմը, «Բայրաքթարները» ու թուրքական այլ զինատեսակները պատճառ են դարձել հազարավոր հայերի մահվան, և վերը դեռ շատ թարմ է, կան հերոսների մատուցներ՝ դեռևս հողին չհանձնված: Լաչինի միջանցքի փակվելը նույնպես Թուրքիայի ուղղակի մասնակցությամբ է իրականացվում: Եվ այդ ամենն անտեսել ու անմիջապես հանդես գալ հայտարարություններով, ցավակցական խոսքով... Կարծում եմ, այնուամենայնիվ, այդ ամենը սրբազման կարիք ունեի: Դրանում տեսնում եմ շտապողականություն, ավելի զուսպ մոտեցումներ էին պետք: Չնայած հասկանալի է նաև, որ հարևան երկիր է, ու այս պարագայում Հայաստանի կողմից օգնության ցուցաբերումն ինչ-որ տեղ տրամաբանական է, որովհետև երկրաշարժերն այս տարածաշրջանում սովորական երևույթներ են, և տարբեր պետություններ կարող են բախվել դրան, բայց առաջնորդվել միայն դիվանագիտական արարողակարգով ընդունված ձևերով և անտեսել մնացածը, կարծում եմ՝ տրամաբանական չէ, ճիշտ չէ:

– 2020 թ. նոյեմբերի 9-ից և մասնավորապես այդ տարվա դեկտեմբերի 18-ից հետո, երբ մեր առաջապահ զորքերը հետքաշվեցին զբաղեցրած դիրքերից, Սյունիքի շուրջ ռազմաքաղաքական նոր և վտանգավոր իրավիճակ ստեղծվեց:

Սակայն սյունիքյան մտահոգություններին անդրադառնալուց առաջ կուզե՞նայինք նախ բնարկել Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված վիճակը՝ նկատի ունենալով դարերով ապացուցված ճշմարտությունը՝ Սյունիքի լինելիությունը պայմանավորված է Արցախով, և՛ ընդհակառակը: Եվ ուրեմն՝ ինչպե՞ս էք պատկերացնում միջանցքի վերաբացումն ու խնդրի լուծումը: Այդ պատճառները հանրահայտ են, այս դեպքում դրանց չարժե

Չանգեզուրի պղնձամուլիբդենայինը 2022-ին կրկնապատկել է հարկերի չափը

Պետեկամուտների կոմիտեն հրապարակել է 2022-ի 1000 խոշոր հարկատուների ցանկը:

Հայաստանի ամենամեծ հարկատուն Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատն է՝ վճարած մոտ 144 միլիարդ դրամ հարկերով: 2021-ի համեմատ կոմբինատն ավելի բան կրկնապատկել է հարկերի չափը: Կոմբինատի կողմից հարկերի այսպիսի մեծացումը ենթադրաբար կապված է միջազգային շուկայում պղնձի բարձր գնի հետ: Բացի այդ, կառավարությունը 2021-ից հանքարդյունաբերողների համար սահմանել էր պղնձի, մոլիբդենի ու ֆեռոմոլիբդենի համար

արտահանման տուրք: Սա իր հերթին նպաստել է ՉՊՄԿ-ի կողմից հարկերի ավելացմանը: Սրան պետք է գումարել նաև 15 միլիարդ դրամի վերականգնումը, որ իրականացրել է պղնձամուլիբդենայինը՝ ՊԵԿ-ում քննվող բրեթան ցործի շրջանակում: Երկրորդ ամենամեծ հարկատուն «Գազպրոմ Արմենիա»-ն է՝ վճարած 52,2 միլիարդ դրամ հարկերով (ընկերությունը 2021-ին վճարել էր 47,8 միլիարդ դրամ): Վճարած հարկերի մեծությամբ երրորդ տեղում ծխախոտի արտադրությամբ ու ար-

տահանմամբ զբաղվող «Գրանդ տոբակո»-ն է՝ 45 միլիարդ դրամի չափով վճարած հարկերով: Խոշոր հարկատուների տասնյակում կան ծխախոտի արտադրությամբ, ներմուծմամբ, արտահանմամբ ու վաճառքով զբաղվող 4 ընկերություն («Գրանդ տոբակո», «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ», «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» և «Տեյ թի այ Արմենիա»), 2 հանքարդյունաբերական ընկերություններ՝ հանձնիս ՉՊՄԿ-ի և Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատի: Վերջինի վճարած

հարկերը 2022-ին աճել են մոտ 300 տոկոսով (2021-ին Ազարակի պղնձամուլիբդենայինը վճարել էր 6,6 միլիարդ դրամ հարկ, 2022-ին հասել են 19,6 միլիարդի): Հազար խոշորների ցանկի տասնյակում է նաև կապի օպերատոր Վիվա-ՄՍՍ-ը՝ վճարած մոտ 16 միլիարդ դրամ հարկերով, ինչպես նաև վառելիքի ներմուծմամբ ու վաճառքով զբաղվող «Սի փի Ես Եներջի գրուպ»-ը՝ մոտ 17 միլիարդ դրամով: Հարկերի տպավորիչ աճ է արձանագրել բջջային հեռախոսների ներմուծմամբ ու վաճառքով զբաղվող «Մոբայլ սենթր արթ» ՍՊԸ-ն: Ընկերության հարկերի ծավալը 2021-ի համեմատ բառապատկել է ու կազմել 17,5 միլիարդ դրամ: 2022-ի տվյալներով 1000 խոշոր հարկատուների ցանկը եզրափակում է «Պոռոչիան ընդ փարթներս» ՍՊԸ-ն: Ընկերությունը զբաղվում է մեծածախ առևտրով և տարեկան արդյունքներով վճարել է 261 միլիոն դրամ հարկ:

Արմեն Գյոզալյանը՝ հատուկ բանակային կորպուսի հրամանատար

Յախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրերով զինված ուժերում մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ Յախագահի կայքից: Հրամանագրերից մեկով Արտակ Բուդաղյանն ազատվել է հատուկ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից, մեկ այլ հրամանագրով այդ պաշտոնում է նշանակվել Արմեն Գյոզալյանը, որը մինչ այս զբաղեցնում էր հատուկ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի փոխհրամանատարի պաշտոնը (2021-ի սեպտեմբերից): Հիշեցնենք, որ Արտակ Բուդաղյանն այդ պաշտոնին նշանակվել էր 2021թվականի օգոստոսին: Յախագահի հրամանագրերով պաշտոնից ազատվել են նաև հատուկ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ Բազրատ Մաթևոսյանը, հատուկ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ Սամվել Պողոսյանը: Հատուկ բանակային կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ է նշանակվել Լևոն Կասյանը, իսկ հատուկ բա-



Նակային կորպուսի հրամանատարի տեղակալ՝ Գազիկ Պողոսյանը:



Երկարամյա ծրագրի հաջող համագործակցությունը մոտենում է ավարտին

Հունվարի 28-ին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը և «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանն այցելել են Լեռնագործների 16 հասցեում կառուցվող Նախապրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ընթանում են կապիտալ շինարարության ծավալուն աշխատանքներ: Համայնքի ղեկավարն ու «Չաարատ Կապան» ՓԲԸ տնօրենը հանդիպել են շինաշխատանքներ իրականացնող կազմակերպության ներկայացուցիչներին և Նախագծային աշխատանքների հեղինակին, հետաքրքրվել շինարարության ընթացքով, կատարված և նախատեսվող աշխատանքներով: Շենքում ներկա դրությամբ ընթանում են արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ: Համայնքի ղեկավարը Դավիթ Թովմասյանի հետ շրջել է շենքում, մանրամասն ծանո-

թացրել ապագա մանկապարտեզի շենքային պայմաններին՝ ներկայացնելով, թե որ հարկաբաժնում ինչ է տեղակայված լինելու: Հրջայցի ավարտին «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շենքի ջերմամեկուսացման, մանկապարտեզն անհրաժեշտ գույքով համալրելու և տարածքի բարեկարգման աշխատանքները ֆինանսավորելու մասին: Նշենք, որ ՆՌԻ-ի գործարկումով լուծվելու է շուրջ 146 երեխայի հաճախելիության խնդիր, ստեղծվելու են աշխատատեղեր, հատկապես կանանց զբաղվածությունն ապահովելու համար և, իհարկե, երեխաներին նախապրոցական կրթության մեջ առավելագույն չափով ներգրավելու համար արժանավայել պայմաններ: ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆԱՍԴԵՍԱՐԱՆ



Մարտի 1-ից մայիսի 12-ը պահեստազորայինների վարժական հավաքներ կանցկացվեն

Մարտի 1-ից մինչև մայիսի 12-ը կհայտարարվի պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ: Վարժական հավաքներին կներգրավվի մինչև 3281 բաղաբացի, որոնցից 2897-ը՝ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի, 152-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 232-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ համազորային և հրթիռահրետանային մասնագիտություններով:

Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորայինների ռազմական ունակությունների կատարելագործման, մասնագիտական վերապատրաստման և պատրաստման, բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման, մարտական հերթապահության ներգրավման նպատակով: Հայտարարված վարժական հավաքների ընթացքում յուրաքանչյուր բաղաբացի ներգրավվում է ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով: Կ

Կարդիականացվի Մեղրիի սահմանային անցակետը

Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր է կնքվել «Թանա Եներջի Մենեջմենթ» ընկերության հետ: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է ՊԵԿ Նախագահ Ռուստամ Բաղասյանը: Պայմանագրի արժեքը 18 միլիոն 495 հազար եվրո է: «Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնել միջազգային բոլոր գործընկերներին, մասնավորապես, Եվրամիությանը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին՝ համատեղ կատարված հսկայական աշխատանքի համար: Ընդգծել եմ, որ Մեղրիի արդիականացված անցակետը միանշանակ կնպաստի Հա-



յաստանում սահմանային անցման կետով արագ սահմանահատման հնարավորությունների ստեղծմանը, ինչպես նաև ժամանակակից պայմաններին համահունչ մաքսակետ ունենալու մեր տեսլականին», - գրել է Բաղասյանը: Հինարարական աշխատանքները կավարտվեն 2026 թվականին, որի արդյունքում նախատեսվում է ունենալ ժամանակակից անցակետ: Կ

Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի 44-րդ տարեդարձը

Իրանում Ղաջարների արքայատոհմի անկումից հետո իշխանությունն անցավ Ռեզա շահին (1925-1941 թթ.): Նրանից հետո գահին նստեց որդին՝ Մոհամադ Ռեզա Շահը (1941-1979 թթ.): 3-րդ և որդու օրոք տևեց անկախ, քաղաքական և սոցիալական բազմաթիվ խնդիրների, ինչպես նաև Իրանի քաղաքական ճակատագրին որոշ երկրների միջամտության պատճառով Իրանում ժողովրդական մեծ դժգոհություն բարձրացավ: Սեյեդ Ռուհոլլա Խոմեյնին, ունենալով լայն հասարակական աջակցություն Իրանի ժողովրդի շրջանում, ստանձնեց ընդդիմության առաջնորդությունը և սկսեց պայքար շահական ռեժիմի դեմ, որի արդյունքում Իրանի շահը ստիպված եղավ փախչել երկրից:

Մարդկանց տարբեր հասարակական խավերի մասնակցությամբ Իրանի ժողովրդական հեղափոխությունը հաղթեց 1979 թվականի փետրվարի 11-ին, որն էլ սկսվեց տոնվել որպես «Իրանի իսլամական հեղափոխության» հաղթանակի օր:

Իրանի իսլամական հեղափոխության

հաղթանակից երկու ամիս անց՝ 1979 թվականի մարտի 30-ին և 31-ին, որը Իրանում և նրա սահմաններից դուրս հանրաբնույթ անցկացվեց, որի մասնակիցների 98,2 տոկոսը քվեարկեց «Իրանի Իսլամական Հանրապետության» համակարգի օգտին:

Հեղափոխությունից հետո բոլոր կրոնական փոքրամասնությունները՝ հրեաները, հայերը, ասորիները և զրադաշտականները, պատգամավորական աթոռներ ստացան Իսլամական խորհրդում, իսկ այժմ էլ Իրանի խորհրդարանում երկու հայ պատգամավոր կա: Հատկանշական է, որ վերոնշյալ փոքրամասնությունները Շահի օրոք խորհրդարանում ներկայությունը չունեին:

Մյուս կարևոր փոփոխությունը կանանց ներկայությունն է Իրանի հասարակական, համալսարանական, գիտական և մասնագիտական կենտրոններում: Համեմատած Շահի շրջանի հետ, Իրանում զգալի կերպով մեծացավ կանանց հասարակական և քաղաքական ներկայությունը երկրի տարբեր ոլորտներում:



Իրանի Իսլամական Հանրապետությունն արդեն 44 տարեկան է, և չնայած խիստ պատժափոցներին, բոլոր ոլորտներում երկիրը համաշխարհային մակարդակով մեծ առաջընթաց է գրանցել: Հատկապես գիտության, բժշկության, օդատիեզերական ոլորտում և այլն:

Իրանն արդեն 31 տարի է՝ Հայաստանի հետ բոլոր ոլորտներում շատ լավ ու եղբայ-

րական հարաբերություններ ունի, և այդ հարաբերություններն օրեցօր ավելանում են:

Վերջերս Կապանում տեղի ունեցավ Իրանի հյուպատոսության բացումը, որը չափազանց կարևոր քայլ էր վերոնշյալ եղբայրական հարաբերություններն առավել զարգացնելու համար: Հուսով ենք՝ մոտ ապագայում Իրանում Հայաստանի հյուպատոսությունը նույնպես կբացվի:

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին հյուրընկալվեց «Սյունյաց երկրի» խմբագրությունում



Փետրվարի 6-ին «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն այցելեց Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գերագույն հյուպատոսարանի հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին:

Լրատվամիջոցի խմբագրակազմի հետ հանդիպմանը Սամվել Ալեքսանյանը նախ շնորհակալություն հայտնեց հյուպատոսին՝ խմբագրություն այցելելու և գրուցելու հնարավորության համար:

Այնուհետև պարբերականի խմբագրակազմի և ընթերցողների անունից ցավակցություն հայտնվեց՝ հունվարի 28-ին Խոյ քաղաքում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով մարդկային կորուստների համար, իսկ բոլոր տուժածներին դժվարությունները շուտափույթ հաղթահարելու մարտնչական փոխանցվեց:

Ճանաչված դիվանագետին ներկայացվեց «Սյունյաց երկիր» թերթի անցած 20-ամյա ուղին, որդեգրած հայեցակարգը և այն առաջնահերթությունները, որոնք մտահոգում են պարբերականին ու ընթերցողներին:

Հանդիպման ընթացքում հետաքրքիր զրույց ծավալվեց հայ-իրանական բազմադարյա հարաբերությունների սյունիքային և արցախյան որոշ դրսևորումների շուրջ:

Հետադարձ հայացք ձգվեց մասնավորապես Իրանի Նադիր Շահի ժամանակներին (Իրանի շահ՝ 1736-ից), ում թագադրումը կատարվեց նաև Ամենայն հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու ձեռամբ: Նա Իրանի այն տիրակալն էր, ով հատկապես եղվարդի ճակատամարտում թուրքերին ջախջախելուց հետո լավագույնս գնահատեց հայ աշխարհագրոսիներին, հովանավորեց հայ իշխանավորներին ու առևտրականներին, վերականգնեց հայ հոգևորականության նախկինում սահմանված արտոնությունները և ամենակարևորը՝ Արցախի մեղիությունները միավորեց Խամսայի մեղիության մեջ՝ նրանց տալով ռազմաքաղաքական անկախության բարձր կարգավիճակ:

Ուշագրավ դրվագներ ներկայացվեցին նաև Շահ Աբբաս 1-ի օրերից (1587-1629): Նա էր, որ արքայական հատուկ հրովարտակով (1609 թ.) աննախադեպ մեծ լիազորություններով օժտեց Սյունիքի գլխավոր իշխանավոր, Քաշաթաղի Մելիք Հայկազն 2-ին, ով էլ վճռորոշ դեր խաղաց Սյունիքի պաշտպանության, Սյունիքի հոգևոր-մշակութային կյանքի զարգացման, Սյունիքից և Արցախից հայերի բռնազաղթը կանխելու գործում:

Շահ Աբբաս 1-ինն էր, ով արքայական հրամանով մեր մեծ հայրենակից Մովսես

վարդապետ Խոտանանցուն 1627-ին նշանակեց Էջմիածնի լուսարարապետ:

Հետագայում (1629 թ.) նրա որդի Շահ Սաֆիի հրամանով էր և Մովսես Խոտանանցու միջնորդությամբ, որ Էջմիածինն ազատվեց տարեկան 100 թուման փիշեքի պարտավորությունից, ինչը մեծ աջակցություն էր Հայ առաքելական եկեղեցուն:

Շահ Սաֆիի համաձայնությամբ էր, որ Սյունյաց աշխարհի մեծ գավակ Մովսես Խոտանանցին ընտրվեց Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս:

Չրուցակիցների խոսակցության թեման այնուհետև մեր տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական Նոր իրողություններն էին և առկա մարտահրավերները:

Մորթեզա Աբեդին Վարամին հիշեցրեց Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռայիսի կողմից քանիցս բարձրաձայնված այն միտքը, որ Հայաստանի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անխախտելիությունն անբեկանելի սկզբունքներ են:

Պարոն հյուպատոսը ներկայացրեց նաև սյունիքյան իրենց առաջիկա ծրագրերից մի քանիսը՝ կրթամշակութային և սոցիալ-տնտեսական ոլորտին առնչվող, հույս հայտնելով, որ «Սյունյաց երկիր» պարբերականն իր հերթին նպաստ կբերի դրանց իրագործմանը, ինչպես և հյուպատոսարանի գործունեության հանրայնացմանը, հայ-իրանական հարաբերությունների հետագա զարգացմանը:

Այնուհետև Սամվել Ալեքսանյանը ներկայացրեց Լաչինի միջանցքի շրջափակման հետևանքով Արցախի Հանրապետությունում ստեղծված ծանրագույն իրավիճակը և ակնկալիքներ փոխանցեց առ այն, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը գործնական քայլերի կոդի միջանցքում Ադրբեջանի հանցագործ պահվածքը վերջակետելու և Արցախի հայ բնակչության իրավունքները պաշտպանելու ուղղությամբ:

Հանդիպման ավարտին պարոն Մորթեզա Աբեդին Վարամին հանձնվեցին «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսի մի քանի համարներ, որոնց միջոցով հարգարժան հյուրերը հնարավորություն կունենան առավել հանգամանալից ծանոթանալ Սյունիքի պատմությանն ու սրբավայրերին:



Իրանը եւ Հայաստանը թույլ չեն տա, որ միջանցք ստեղծվի

Որոշ խորամանկություն է նկատվում, խոսվում է այսպես կոչված միջանցքների, ինչ-որ գործողությունների մասին, բայց Իրանը եւ Հայաստանը թույլ չեն տա, որ նման միջանցք ստեղծվի: Այս մասին «Հայ-իրանական հարաբերություններն ընդհանուր շահերի համատեքստում» թեմայով քննարկման ժամանակ փետրվարի 9-ին ասել է Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Աբաս Բադախշան Չոհուրին:

Նա նշել է այն մասին, որ անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը եւ Իրանն աշխատեն այս ուղղությամբ՝ հանդես գալով նախաձեռնություններով: «Չպետք է թույլ տանք, որպեսզի նախաձեռնությունը բխի մեկ այլ կողմից, իսկ մենք ընդամենը համապատասխանեք դրան: Հակառակը, մենք պետք է ինքներս հանդես գանք նախաձեռնությամբ: Մենք պետք է նայենք, թե ինչ քայլեր են հարկավոր, ոչ թե սպասենք, որպեսզի լինի ինչ-որ միջանցքի բացման նախաձեռնություն, իսկ հետո արդեն մտածենք, թե ինչ դիրքորոշում զբաղեցնենք ու արտահայտենք այն: Մենք չպետք է դա թույլ տանք», – ասել է դեսպանը:

Նա կարևոր խնդիր է համարել պատմական փաստերի աղճատումը, եւ եթե չլինեին տարածքային փոխանակումները, ապա այսօր, նրա գնահատմամբ, աշխարհաքաղաքական իրավիճակը տարածաշրջանում կարող էր այլ լինել: «Այլ երկրները ցանկանում էին, որ իսլամական հեղափոխությունը ձախողվեր: Դա հանգեցրեց իրանափոխության պատերազմին, որի արդյունքներով Իրանը ոչ մի թիզ հող չկորցրեց: Դա պայառուցում է, որ ժողովրդի միասնությունը կարող է հասնել հաջողության անգամ 40-ամյա պատժափոցների պայմաններում: Այդ օրինակին կարող են հետեւել նաեւ այլ երկրները», – ասել է Աբաս Բադախշան Չոհուրին:

ՇԱՆԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Սյունիքում մարդիկ շատ ավելի բնույթին տեղ տվող, ձևից հեռու կերպարի մեջ են»

«Կինոաշխարհի» հարցազրույցը՝ ՀՀ վաստակավոր արտիստ, դերասան Շանթ Հովհաննիսյանի հետ է:

Պարոն Հովհաննիսյան, մեր խոսակցությունը մի քանի անգամ հետաձգվեց, ասացիք՝ Ձեր հոր գերեզմանն էք սարքում, հետո հարազատի մահ ունեցաք... կարծես թե, դժվարին ժամանակներ են բոլոր առումներով:

– Բոլորիս համար են դժվարին ժամանակներ, դրան գումարած նաև՝ անձնականը: Պատերազմից հետո հայրս մահացավ, հարազատների կորուստ ունեցա... Վատ շրջան էր, բայց փորձում էսք ուժով լինել:

– Շա՛տ էիք կապված Ձեր հոր հետ:

– Վերջին տարիներին առավել մտերիմ էինք դարձել: Չնայած ընդամենը 75 տարեկան էր, բայց վերջին շրջանում փոխվել էր. կարծես կանխագույժ էր իր կյանքի մայրամուտը: Ծնողները միակ արժեքն են, որ փոխարինել հնարավոր չէ, ու բախտավոր են այն մարդիկ, որոնք լավ ծնողներ են ունենում: Երբ լիարժեք ընտանիքում ու սիրո մեջ են մեծանում, հետագայում դա իր ազդեցությունն է ունենում թե՛ թե ստեղծած ընտանիքի, թե՛ շրջապատում վարքագծի վրա:

Մեր ընտանիքում՝ հորս ստեղծած ընտանիքում, ջերմությունն այնքան շատ էր, որ դեռ մի քանի սերունդ էլ կապրեցին: Հորս հետ հարաբերություններս սովորական ընկերական չէին, ինչպես հաճախ պատահում է. մենք հենց հայր ու որդի էինք, հարաբերություններում հարգանքի պատնեջ կար: Հորս մեկ բառը, մեկ հայացքն ինձ համար ավելի ազդեցիկ էր, քան շատերի՝ ժամերով խոսելը: Իրեն ընդորինակելու ցանկություն միշտ եմ ունեցել, և ճիշտ են ասում, թե սովորարդու համար լավագույն օրինակը հայրն է: Երբ ծնող են կորցնում, կյանքին սկսում են այլ աչքերով նայել, ու կապ չունենա՞նք որ տարիքում են որբանում. այդ կետից հետո կյանքը այլևս առաջվանը չէ, դու այլևս առաջվանը չես: Առհասարակ, կորուստների հետ շատ մեծ դժվարությամբ եմ հաշտվում, չեմ հաշտվում, բայց պատասխանատվությունը, թե ներսում եղած մեկ այլ ավելի զորեղ ուժ առաջ են մղում, ստիպում հիշողությունները վերածել կյանքի ասպրեզուրով:

– Իսկ ստեղծագործական ոլորտում ինչ-

պե՞ս էք վերականգնում:

– Գիտե՞ք, ամեն շրջանի հաջորդում է մեկ ուրիշը՝ վատին լավը, հետո՝ լորից վատը ու այդպես շարունակ: Բայց եթե կա ընդհանուր ցավ, հոգս, հաճախ ստեղծագործող մարդը դա իր վրա է կրում: Իհարկե, դժվար է այս ամենի մեջ հետաքրքիր մտահղացումներ ունենալ, քանի որ միտքը ավելի շատ զբաղված է լինում հոգսերով, խնդիրներով: Այդ իրավիճակը հաճախ փրկում է նաև այն, երբ զբաղված ես ֆիլմով կամ ներկայացումով՝ փորձելով ստեղծագործության միջոցով թո՛ղ խոսքս ասել, հույզերդ արտահայտել:

– Ձեր հիմնական բնակության վայրը Գորիս քաղաքն է: Սովորաբար Երևանում կրթություն ստանալուց ու որոշ ժամանակ այստեղ աշխատելուց հետո շատերն այդպես էլ չեն վերադառնում իրենց հայրենի գյուղ կամ քաղաք: Ձեր դեպքում հակառակն է...

– 1990-ականներից այստեղ եմ ստեղծագործում ու ապրում, իմ հիմնական բնակավայրը Սյունիքի մարզն է, բայց մայրաքաղաքի հետ կապը երբեք չեմ կտրել ու չեմ կտրելու: Ես հիմա Գորիսի թատրոնի տնօրենն եմ, միևնույն ժամանակ՝ դերասան, բայց պարբերաբար լինում եմ նաև Երևանում. հրավերից հրավեր գալիս, աշխատում եմ: Շատ հաճախ էլ Երևանում եմ լինում թատրոնի արվեստագործներով: Իմ կենսագրությունն այդպես ստացվեց, իսկ թե ինչ կլինի վաղը՝ չգիտեմ: Առայժմ Սյունիքում եմ:

– Շատ է խոսվում սյունեցիների անկողնում լինելու, յուրահատուկ և միայն իրենց բնորոշ բնավորության գծերի մասին: Դժվար թե որևէ մեկն այդ տարբերությունը կարողանա այնքան խորությամբ նկատել, որքան Դուք:

– Չնայած նույն ազգն ենք, բայց զգալի տարբեր են մտածելակերպի, պահվածքի առումով: Ի վերջո, բնությունն իր ազդեցությունն է թողնում մարդու բնավորության ու էության վրա: Գիտե՞ք, ներքին վիճակ կա, որ բառերով բնութագրել հնարավոր չէ. հաճախ մարդուն տեսնելով, հետո մի քանի բառ խոսելով՝ զգում ես՝ նա կարող է լինել սյունեցի, գյուղեցի կամ...

Ինչպես է, չէ՞, պտուղը մեկ տարածքում ու եղանակային պայմաններում այլ համ է ունենում, իսկ մեկ ուրիշ տեղում՝ բոլորովին այլ: Ինչքան էլ այս համեմատությունը կոպիտ



թվա, բայց այդպես է:

Սյունիքը միշտ էլ գոյամարտի ու ազատամարտի էպիկենտրոնում է եղել, մարդիկ զգո՛ւն են, իսկ չորությունն էլ, կարծում եմ, այս բնության մեջ ապրելուց է գալիս. այստեղ մարդիկ շատ ավելի բնույթին տեղ տվող, ձևից հեռու կերպարի մեջ են: Գուցե կենցաղի մեջ շատ ճկուն չեն, բայց կյանքում ավելի հաստատակամ են:

– Երևի այդ զգոնությունը կրկնապատկվել է այսօր:

– Հիմա... հիմա մոտեցանք ամենադժվար հարցին: Տարօրինակ բան է կատարվում բոլորիս հետ: Զգոնեմ աշխարհում է՞լ է այդպես: Չնայած աշխարհն էլ է հիվանդացել: Մեզ մոտ անտարբերությունն այնքան մեծ է ամեն ինչի նկատմամբ, հաճախ չես էլ հասկանում, թե մարդիկ որտեղ են ծվարած իրենց մտքերով ու հոգսերով, կամ ի՞նչն է իրենց շարժիչ ուժը, ի՞նչն է դրո՛ղում ապրելու ու արարելու, ի վերջո, ի՞նչ ստիմուլ ունեն, որտեղի՞ց են սկսվում. հաճախ չեմ կարողանում հասկանալ:

Մեզանում վատ երևույթներ եղան, մարդիկ նպատակներից շեղվեցին: Ամբողջ կարևորությունը լրոզվել է, կորել: Թե այդ ո՞ր պահից եղավ, որ մենք սկսեցինք չհասկանալ, որ այդ ամբողջից ենք «սկսվում», ամբողջն

է մեզ պահում: Այսօր ավելի շատ մեծացել են անհատական ձգտումները: Մենք այսօր փորձում ենք անհատապես կայանալ բոլոր բնագավառներում, ինչ-որ անհասկանալի մրցակազմ է մտել մարդկանց մեջ, որը վատ հետևանքների է տանում:

Այդ առումով այդպես է ամեն տեղ, ոչ միայն արվեստում, ինչը մեր նման փոքր պետությունն ունեցողի համար կարող է կործանարար լինել: Ինչքան փորձում ես էվոլյուցիայի օրենքներով շարժվել, այնքան կորցնում ես թո՛ղ ինքնությամբ ապրելու կարողությունը: Այդպես միայն մեզ մոտ չէ, բայց մենք՝ հայերս, շատ շուտ ենք կանում ամեն ինչ՝ թե՛ լավ, թե՛ վատը, ինչը, ցավոք, նստվածք է տալիս:

– Ի՞նչ տրամադրություն է տիրում հիմա Սյունիքում:

– Հիմա այստեղ շինարարական աշխատանքներ են ընթանում: Ջրի խողովակներ են թարմացնում: Եռուզեռ կա, բայց ինչ-որ պահի չգիտես՝ ուրախանա, թե կասկածես: Այ այդպես, բոլորիս սարքեցին կասկածափոխ: Անհասկանալի ու անորոշ վիճակ է, տարաբնույթ շահարկումներ և իրարամերժ ինֆորմացիան լավատեսությունն չեն ներշնչում:

Հիմա շատ հաճախ եմ հիշում պատանեկան տարիներս. մարդկանց համախմբվածությունը, իրար հետ ուրախանալը. միգուցե տարիքից էր, կամ ժամանակներն էին այդպիսին: Մարդիկ համախմբված էին, միասին ուրախանում էին, միասին տխրում. հիմա այդ զգացողությունն է ինձ անբացահայտ: Խաղաղություն կար, անհոգ էինք: Ազատ էինք, կաշկանդված չէինք: Ներդաշնակություն կար, անում էինք գործ, որտեղ անհայտություն կար, բայց հոգեհարազատ վիճակ էր, որի մեջ մեզ լավ էինք զգում:

– Պատանեկության տարիներին Շինուհայրում ունեցած ինքնագործ խմբի մասին է խոսքը:

– Այո՛: Մի քանի հոգով բեմադրություններ էինք անում, ամբողջ գիշեր մնում, ինչ-որ բան մոգնում, հետո 300-400 հոգանոց դահլիճներ էինք լցնում: Այդ ամենն անում էինք անվճար՝ համագյուղացիների համար, կողքի համայնքների համար: Շատ էինք սիրում, երբ մեզ ծափահարում էին, երևի հենց դա էլ օգնեց հետագայում մասնագիտության ընտրության հարցում:

14 տարեկանում խաղում էինք 18-20 տա-

Հարունակությունը՝ էջ 8

Ներդրումելով՝ Ադրբեջանը շրջանառության մեջ դրեց այդ եզրույթը, թեև եռակողմ հայտարարության մեջ նման դրույթ չկա: Պաշտոնական Երևանը մերժում է միջանցքային տրամաբանությամբ հաղորդակցության որևէ ուղու բացում արևմտյան Ադրբեջանի ու Նախիջևանի միջև: Թուրքիան, Ադրբեջանը շարունակում են պնդել, երբեմն նույնիսկ սպառնալ...

Եվ հարցը, այդպիսով, շարունակում է մնալ օրակարգում:

– Նախևառաջ ֆիքսենք՝ Չանգեզուրի միջանցքը միշտ եղել է թուրք-արդբեջանական բաղաբաժան նպատակների օրակարգում: Այն ժամանակվանից, երբ Սյունիքն ազատագրվեց կամ չորսրձավ թուրքական ու արդբեջանական զավթողական նպատակների և մեկ տարածք, և Գարեգին Նժդեհի ու մեր երախտավորների շնորհիվ ազատագրվեց: Այդ նույն ժամանակվանից Թուրքիան մշակում է ծրագիր՝ Սյունիքում, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասամբ՝ միջանցքի տեսքով, Ադրբեջանը կապել Նախիջևանի հետ: Այսինքն՝ Չանգեզուրի միջանցքը կոչված երևույթը ծնվել է թուրքական ու արդբեջանական բաղաբաժան կան մտածողության մեջ 1920-ականներին և հաջորդող տասնամյակների մասցել թուրքական ու արդբեջանական բաղաբաժան մտածողության մեջ, անկախ նրանից, որ գոյություն ունեն Սովետական Միություն: Թուրքիան շարունակում էր Չանգեզուրի նկատմամբ իր հեռահար նպատակներն իրականացնել: Դրա առաջին քայլը եղավ 1932 թվականին, երբ Թուրքիան՝ Իրանի հետ գալով համաձայնության, տարածքներ փոխանակեց ու ձեռք բերեց ցամաքային սահման Նախիջևանի հետ,

այսպես կոչված միջանցք, որը Թուրքիային կապում է Նախիջևանի հետ: Դա իրականացնելու արձագանք էր, որ միայն 1932 թվականին Թուրքիան կարողացավ ձեռք բերել: Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Բենալ Աթաթուրքն ասում էր՝ սա առաջին քայլն է դեպի Չանգեզուրի միջանցք, հաջորդն արդեն պետք է անեն իր ժառանգները: Իսկ հաջորդն արդեն Նախիջևանի ցամաքային կապը պետք է լինե՛ր Ադրբեջանի հետ, որը կանցներ Սյունիքով:

Սովետական Հայաստանի ամբողջ գոյության ընթացքում Ադրբեջանը ցանկացել է Չանգեզուրով՝ Մեդրիով ունենալ միջանցք, և Սովետական Հայաստանի բոլոր ղեկավարները դրան դեմ են կանգնել՝ Գրիգոր Հարությունյան, Քոչինյան, Դեմիրճյան... Այսինքն՝ այն, ինչ հիմա ասում ենք Չանգեզուրի միջանցքի մասին՝ ավելի քան 100-ամյա թուրք-արդբեջանական ծրագիր է:

Երկրորդ՝ մենք գիտենք, որ Թուրքիան ուներ հայտնի երեք նախապայման՝ դրված Հայաստանի առջև. Արցախի հարցն էր, ցեղասպանության հարցը և Թուրքիայի սահմանների ճանաչման հարցը, բայց արդեն 2020 թվականից հետո Չանգեզուրի միջանցքը դարձել է Թուրքիայի չորրորդ նախապայմանը՝ դրված Հայաստանի առջև: Այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունները կկարգավորվեն միայն այն դեպքում, եթե Հայաստանը Չանգեզուրով միջանցք տրամադրի Ադրբեջանին:

Ու երրորդը՝ Չանգեզուրի միջանցքի հետ կապված թուրք-արդբեջանական պահանջներն ու բարոգյությունը երկու ոճով են դրսևորվում՝ մեկը կոշտ, հայտարարում են՝ եթե կամովին չտաք՝ մենք բռնի ուժով կվերցնենք, մյուսը՝ սիրաշահելով՝ Չանգեզուրի մի-

ջանցքի բացումը դա նաև Հայաստանին է օգուտ, տնտեսական շահեր, կոմունիկացիաներ և այլն: Այսինքն՝ գործում է սիրաշահելու արևելյան մեխանիզմը, բայց և միևնույն է՝ Չանգեզուրի միջանցքը կոչված երևույթը, իրականացնելու հնարը, Հայաստանի համար գլխավոր սպառնալիքներից մեկը կլինի, Հայաստանի պետականության հիմքում դրված ակտիվ ռուճը կլինի, որն ամեն պահի կարող է պայթել: Եվ միայն այն, որ Սովետական Հայաստանի ղեկավարներն անգամ Սովետական Միության գոյության ժամանակ ակտիվորեն պայքարել են այդ միջանցքի դեմ, թույլ է տալիս ենթադրել, թե դա որքան մեծ վտանգ է Հայաստանի պետականության համար: Այնպես որ՝ քանի Թուրքիան և Ադրբեջանն այդքան ինտենսիվորեն պահանջում են այդ միջանցքը, պետք է գիտակցել՝ դա մեծ կարևորություն ունի Թուրքիայի և Ադրբեջանի համար: Իսկ եթե այդքան մեծ կարևորություն ունի նրանց համար, ուրեմն ուղիղ դեմ է Հայաստան պետության շահերին:

– Հայտնի արտահայտություն կա, որ նաև Գարեգին Նժդեհին է վերագրվում ուզում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմի: Դուք կիրարկելի՞ էք համարում այդ բանաձևը մեզանում՝ ստեղծված ռազմաքաղաքական ներկա իրավիճակում:

– Որպես նաև արևելագետ՝ գիտե՛մ մի իրողություն՝ Արևելքում, Մերձավոր արևելքում, իսկ Հայաստանն ըստ էության արևելք է, երբեք խաղաղություն չի լինում: Եվ խաղաղությունը դիտում են միայն այն պարագայում, երբ դու ունես լծակներ, նաև ռազմական լծակներ՝ ապահովելու թո խաղաղությունը: Այդ դեպքում թշնամին գիտի, որ թո դեմ ոտնձգությո-

յունը կարող է իր համար ծանր հետևանքներ ունենալ: Եվ միայն այդ պարագայում է լինում փիլիսոփայական խաղաղություն, ինչպիսին որ կար, օրինակ, Արցախյան առաջին պատերազմից հետո: Հետևաբար՝ արքեթ Կերամովոր արևելքում և ենթադրել, որ պատերազմ չի լինելու, և դու կարող ես միայն խաղաղ ձևով թո հարաբերությունները կարգավորել հարևանների հետ, ուղղակի մոլորություն է: Եվ խաղաղության ներկայիս կոնցեպտի հեղինակների ամենակարևոր սխալն այն է, որ դրանք խառնում են տարածաշրջանները, մտածում են՝ այն օրենքները, որ գործում են Եվրոպայում, այն հարաբերությունները, որ կան, ասելք, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լյուքսեմբուրգի միջև, նույն հարաբերությունները հնարավոր է տեղափոխել Արևելք և նույն ոճով այստեղ խաղաղություն ապահովել: Այդպես չի լինում: Եթե դիտարկենք Արևելքը, ապա այստեղ պերմանենտ պատերազմներ են՝ մեծամասշտաբ, փոքրամասշտաբ: Եվ եթե ապրում ենք այս տարածաշրջանում, եթե մեր պետությունն այստեղ է, ուղղակի վայր դնել մեր գեները և հույսներս դնել ինչ-որ բանաձևերի, փաստաթղթերի, պայմանագրերի վրա, դա ուղղակի դեպի կործանում տանող ամենակարծ ճանապարհն է: Հետևաբար՝ Գարեգին Նժդեհի ասածը, բնականաբար, ճիշտ է, բայց նաև ճիշտ է այն, որ աշխարհաքաղաքական, քաղաքագիտական իրողություններն ուղղակի, բաց տեքստով ասում են՝ Արևելքում փիլիսոփայական խաղաղություն կամ հարաբերական խաղաղություն կարող է լինել միայն այն դեպքում, երբ դու ունես զսպող մեխանիզմներ:

ՀԱՅԱՑԱՌՈՒՅՑՆԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Սյունիքում ամենախոշոր մարզահամալիրը բացեց դռները

«Առողջ մարմնում առողջ հոգի» ձևակերպումը լավագույնս կյանքի կոչելու հնարավորություններ են ստեղծվել մարզկենտրոն Կապանում: Հունվարի 14-ին հանդիսավորապես բացվեց «ԻնՍպորտ-Սյունիք» մարզահամալիրը, որի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմել է 7514 քառ. մետր: Մարզահամալիրի թողունակությունը մեկ ժամում 200 մարդ է, գործելու են լողավազաններ (մեծահասակների համար և մանկական), որոնք հագեցած են ֆիլտրման գերժամանակակից քառաստիճան համակարգով, ժամանակակից մարզասարքերով կահավորված ֆիտնեսի սրահ, բռնցքամարտի ու արևելյան մարտարվեստի սրահներ և այլն: Մեծահասակների լողավազանի երկարությունը 38 մ է և հարմարեցված է ինչպես ակտիվ լողի, այնպես էլ հանգստի համար:



Մարզական բաղադրիչից բացի՝ կարևոր է նաև սոցիալականը: Մարզահամալիրի գործարկմամբ՝ ստեղծվել է 42 մշտական աշխատատեղ՝ 195,000 դրամ միջին աշխատավարձով, և սա դեռ ներդրումային ծրագրի առաջին փուլն է:

Մարզահամալիրի բացմանը մասնակցում էին մարզային և համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, կառուցիչ շինարարությունը իրականացրած կազմակերպությունների ղեկավարներ, հանրապետության զանգվածային լրատվամիջոցների լրագրողներ:

Օրվա խորհրդին պատշաճորդ օրհնության կարգ կատարեցին Սյունիքի թեմի առաջնորդական տեղապահ գերաշնորհ տեր Մակար վարդապետ Յակոբյանը և Վահանավանքի հոգևոր հովիվ տեր Ավետիք Բահանա Մարտիրոսյանը:

«Այսօր շատ կարևոր օր է իմ գիտակ-

ցական կյանքում, որովհետև իմ հարագատ քաղաքում, որտեղ ծնվել եմ, իմ մանկության բացող հիշողություններն այս հող ու ջրի հետ են կապված, կատարում եմ մի լավ գործ: Եվ կատարում եմ մեծ հպարտությամբ, որովհետև այս մասշտաբի, այս կարգի ենթակառուցվածք Յայաստանի ոչ մի մարզ չունի, մենք այն շարունակելու ենք և մասնակների համար ունենալու ենք մի գրավիչ գոտի: Կապանում չորս միջին դպրատան հասկանում էինք Սյունիքի ապագային, մեր զարգացմանը, - որջերթի խոսքում ասաց Արսեն Բարամյանը և սահուն անցում կատարեց Կապանի բարբառին, - բոլորիդ սիրում եմ, մութ ուժեղ ընթ,

մենք ամեն ինչ հաղթահարելու ենք, և շատ լավ օրեր են կյալու, լավ կիթ»:

«Ուրախ եմ, որ այս ծրագիրը իրականացավ հետպատերազմյան իրականության մեջ: Անշուշտ, համալիրի բացումը խթան կլինի թե սպորտի զարգացման, թե քաղաքի կյանքի աշխուժացման համար: Այն միջոց կլինի և առողջ ապրելակերպի, թե ժամանցի կազմակերպման համար: Կուզենայի նաև փաստել, որ այս ծրագիրը իր մասշտաբով ու ֆինանսական ներդրման չափով առանձնահատուկ է, և Կապան համայնքում իրականացված ներդրումային ծրագրերի շարքում խոշորներից մեկն է: Ուզում եմ շնորհակալություն հայտնել «ԵՊՀ շրջանակարտների միավորում» ՀԿ նախագահ Արսեն Բարամյանին՝ այս կարևոր ներդրման համար, սա յուրահատուկ օրինակներից մեկն է, թե ինչպես կարելի է սիրել իր ծննդավայրը», - բարեմաղթանքի խոսքում ասաց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

Համալիրի մուտքի մոտ արդեն ծածանվում էին Յայաստանի Հանրապետության և Կապան քաղաքի դրոշները: Իսկ «ԻնՍպորտ-Սյունիք»-ի դրոշը բարձրացնելու պատիվը վերապահվեց «ԻնՍպորտ» -ի խորհրդի

գործադիր տնօրեն Դավիթ Յայրապետյանին և «ԻնՍպորտ-Սյունիք»-ի տնօրեն Աշոտ Յայրապետյանին: Իսկ մարզահամալիրի մուտքը երիզող ժապավենի կտրելու արարողությունը կատարեցին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը և «Երևանի պետական համալսարանի շրջանակարտների միավորում» ՀԿ նախագահ Արսեն Բարամյանը:

Այնուհետև արարողության մասնակիցները ծանոթացան մարզահամալիրի պայմաններին. ներսում նվազախումբը հանրածանոթ մեդեդներ էր ինչեցնում, իսկ լողավազանի լազուր ու վճիտ ջուրը պարզապես լողով զբաղվելու անզուսպ ցանկություն էր առաջացնում...:

Մտում է հավելել, որ ծրագրի երկրորդ փուլը կմեկնարկի 2025 թվականին և կծավի մինչև 2028 թ. կեսերը: Նախատեսվում է համալիրի ծախս հատվածում հիմնել այգի, մանկական երկաթուղի, սահաղաշտ, շատրվաններ, համերգային սրահ (400 ստատուեղով) և փոթրիկ սրճարան: Այս ամենով կամրոջանա մարզաառողջարարական համալիրի տարածքը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
16.01.2023

ՇԱՆԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Սյունիքում մարդիկ շատ ավելի բնույթին տեղ տվող, ձևից հեռու կերպարի մեջ են»

Սկզբը՝ էջ 7

րեկան գինվորի դերեր: Սովետական շրջան էր. գինվորի, նրա գործի մասին ինացություններն ու պատկերացումներն այնքան էլ մեծ չէին: Ինչ էլ կար, հիմնականում մեր ավագ ընկերների ու ծնողների գրույցներից էր ձևավորված: Անկախությունից հետո շատ բան փոխվեց, կամաց-կամաց սկսեցի կարդալ, ինչ-որ բաներ փորձել... Արժեքներ ենք ունեցել, որոնք ժամանակի ընթացքում մոռացության են տրվել:

- **Հիմա կա՞ն այդ արժեքները:**

- Հիմա ժամանակները փոխվել են. փորձում են վեր հանել թաքնված արժեքներ, բայց չես հասկանում, թե պատմությունը դեպի ուր է գնում: Մեզ մոտ անընդհատ փոփոխությունների փուլային տարբերակներ են. երևի մեզ հետ խաղում են, մեծ խաղ են խաղում, մենք էլ չենք կարողանում մեր ինքնությունը պաշտպանել, մեր խոսքն ասել:

Ցավոք, այդպես է: Անընդհատ ինչ-որ առևտրի մեջ ենք մտնում: Մի ազգ, որ այսպես լավ գեն ունի՝ մտածող, ստեղծագործող, հազարամյակների պատմություն: Ցավալի է, որ չենք կարողանում մեր իրական դեմքը գտնել, անընդհատ սիրում ենք լողվել, ընդօրինակել:

- **Ինչո՞ւ այդպես եղավ:**

- Խնդիրը կրթության մեջ է: Սա ինձնից խելոք մարդիկ են միշտ ասել: Այստեղ հարցն

այն չէ, թե ինչ համայնքում են ավարտել. կարող ես աշխարհի բոլոր բանաձևերն իմանալ, բայց ընկալունակության խնդիր ունենալ: Մեր ազգին հատուկ կրթական մի մեթոդ է պետք մշակել, որ կարողանանք դարեր շարունակ մեր ինքնությունը պահպանել: Օտարանությունը, ցավոք, խեղդում է մեզ: Տարիներ շարունակ ինքնությունը պահպանման «հոգս» ավելի շատ ընտանիքներն են իրենց վրա վերցրել, պապիկ-տատիկները. հիմա էլ է նույնը:

- **Ընտանիքներն այսօր կարողանո՞ւմ են այդ պատասխանատվությունը հաղթահարել:**

- Դե այնքանով, որքանով. ինչ էլ կարողացել ենք պաշտպանել, իրենց շնորհիվ է եղել: Գոնե «ընտանիք» հասկացության ինստիտուտն է պահպանվել և եկելեցին. որքան էլ հիմա շատերը հակասական մտքեր տարածեն, այդուհանդերձ, եկելեցին որոշակի առումով իր դերն ու նշանակությունն ունեցել է և ունի:

- **ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն առաջարկում է չեղարկել վաստակավոր և ժողովրդական արտիստի կոչումները: Դուք ևս ՀՀ վաստակավոր արտիստի կոչում ունե՞ք: Ի՞նչ կարծիքի եք այդ առաջարկի և կոչումների մասին:**

- Ամեն լավ երևույթ մարդիկ կարող են փչացնել, կարող են դա օգտագործել շահա-

դիտական նպատակներով. բոլոր երևույթները, նույն բնույթի մեջ գոյություն ունեցող էներգիան կարելի է օգտագործել և՛ լավ, և՛ վատ նպատակներով: Գոհեմ արդյոք հեռուներից չեղարկումը վատ երևույթներից և պատճառներից մեզ հեռու կպահի: Կարծում եմ պատճառների վերացման վրա պիտի աշխատենք: Ես իմ կոչումը ստացել եմ 40 տարեկանում, երևի վաստակավորի համար հարմար տարիք էր (ծիծաղում է):

Վաստակավոր լինելու փաստն ինձ ոչինչ չի տվել, բայց կա պահ, երբ զգում ես, որ այն, ինչ դու արել ես, նկատվել է, ինչն, իհարկե, չի կարող հաճելի չլինել: Յուրաքանչյուր գործում փորձում եմ կարևորություն գտնել, իսկ էժանագին, բանորդ, ոչ ստեղծագործ բաներից շուտ եմ հրաժարվում: Փորձել եմ վատ երևույթներից խուսափել, ու մարդիկ հասկացել են, որ արժե տալ այդ կոչումը: Այդ առումով հանգիստ եմ, որ այդ կոչումն ինձ վաճառված չէ: Ավելի շատ իմ ծնողների համար եմ լավ զգում. իրենց ուրախությունը, աչքերի փայլն ինձ համար ամեն ինչ էին:

Իմ մասնագիտության ու զբաղվածության բերումով ծնողներս բավականաչափ դժվարություններ են կրել. գուցե այլ կերպ լիներ, եթե ես այս մասնագիտությունը չընտրեի, բայց իրենք թողել են, որ իմ սիրած գործով զբաղվեմ: Այդ կոչումն ինձ ինչ-որ առումով նաև զգոն է դարձրել: Արվեստագետը միշտ պետք է իր կարծիքն ունենա, մտահոգ լինի իր երկրի ու ազգի ճակատագրով, բայց ճիշտ բովանդակությամբ, ոչ թե՛ ձևի մեջ: Դետք է մատնանշի իշխանության կողմից արվող սխալները: Ի վերջո, թատրոնով, կինոյով փորձում ենք այդ բալանսը պահել: Դա է մեր առաքելությունը:

- **Շատերն ասում են, որ հայկական կինոն մեռել է: Մեռած է հայկական կինոն:**

- Մենք երբվանի՞ց ենք ճանաչում հայկական կինոն: 20-ական թվականներին, երբ Բեկնազարյանը եկավ, հիմնադրեց «Պետլուսկինո»-ն, նկարեց իր առաջին ֆիլմն ու այդպես սկսվեց հայկական կինոյի պատմությունը: Կար մի շրջան, երբ ֆիլմարտադրությունը վերելք ապրեց, նույնը եղավ նաև Յայաստանում, ինչեցին մեծ անուններ, ունեցանք լավ ֆիլմեր, որոնք մինչև այսօր սերունդներ են կրթում: Զետո՞ անկախություն, փոփոխություններ... Աման դեպքերում միշտ մշակույթը երկրորդ պլան է մղվում, մի բանի նվիրյալներ փորձում են փշրանքները պահել, պահպանել նոր ձևերի մեջ, տարբերակներ գտնել: Կինոյի մասին խոսելիս նաև պետք է հասկանանք, թե որ ֆիլմերից ենք խոսում արվեստի գործերի՞ց, թե՞ գուռ կոմերցիոն նպատակով արված ֆիլմերից. այդ երկուսի մեջ հակասություն կա: Առաջինը ֆիլման կլանող է. այսօրվա ֆիլմարտադրությունը նաև պահանջում է, որ թո արտադրանքը հանրայնացնես, շահույթ ունենաս, որտեղ էլ արդեն խախտվում են շատ-շատ նորմատիվներ: Յայաստանի նման փոքր երկրում էլ է հնարավոր ոչ մեծ գումարներով ֆիլմ նկարել: Մենք այսօր ունենք կարող ուժեր: Մեր վերաբերմունքի և մոտեցումների առաջնահերթություններից էլնելով՝ պետք է լինի համապատասխան վերաբերմունք: Մեզ պե՞տք է կինո, մշակույթ, և անհրաժեշտ է արդյոք դրա վրա ռեսուրս ու ժամանակ վատնել. ես դրա պատասխանն ունեմ (ժպտում է):

ՀԱՐՑԱԶՈՐՔՅՈՒՄ
ԱՂՈՒՄՆԻ ԿՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԻՄԱՏԱՑՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՎ ԿՈՆՍՏԻԹԱՐՈՒՄ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՄԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ծառույան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerker@mail.ru
www.syuniacyerker.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել է մեթոնագիր վիճակում:
«ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Դասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Ծախսեր՝ 1045, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.02.2023թ.: